

ԿԱՊՈՅՏՆԵՐՈՒ ԵՐԳԸ

ԵՍ ԿԸ ՍԻՐԵՄ

Ես կը սիրեմ կապոյտն անհուն երկնքին,
Ուր ռվկէան մը կայ անանց երազի՝
Երբոր տրտում հորիզոնէն մեր անդին՝
Կ'ողջունեն մեզ արշալոյսներ տարփալի:

Ամպերէն վեր, ուր կը դադրի ցաւն հովին
Եւ տրտմութիւնն երջանկութեան կը փոխուի՝
Աստուած կ'իջնէ քեւեր տալու մեր սրտին,
Սարսուռ հագած այս հողեղէն զանգուածի:

Լոյս է կապոյտն, անշամանդաղ պարգուքին,
Թող որ քոչիմ, երազելով նոր փեր,
Հոգիս յանձնած գեփիւտներու խաղերուն,
Մոռցած կիրքերն ու մարդկութիւնն անտարբեր:

Երկրիս վըրայ չըկայ կապոյտ նշմարիտ
Որ իր ծագումն առնէ ծոցէն անհունի.
Հոս ամէն ինչ կը խորտակուի, կ'ըլլայ նիւթ.
Եւ լուծուելով փրփուր փրփուր կ'անհետի:

Երկրիս վըրայ յոյսին կանա՛նչը կայ միայն
Որ գառամեալ մահուան կու տայ հրապոյր.
Խաչին ներքեւ կը հոսի երգն յարութեան,
Եւ հողն ալ լոյս կը դառնայ, փառք ու համբոյր:

Կապոյտ անհուն, անմահութեան առագաստ,
Կապոյտ՝ ուր ա՛չքըս կը հանգչի հիացիկ.
Եղիւր վըրաս ոսկեգմբէք աստղազարդ,
Եւ դուն երկինք՝ տուն եւ տանար երջանիկ:

ՈՍԿԵՂԷՆ ՅԱՆ

Ոսկեղէն ցանն է առատ
Կապոյտ դաշտին աստղածիր.
Ամէն գիշեր սրտակաք
Զայն կը հնձեմ գրկալիր:

Կապոյտ հագած ինձ եկո՛ւր,
Ո՛վ դու հուրի զրարքուն.
Լոյսը չըբնաղ երկնատուր
Բեր ու քափէ ծոցս արքուն:

Աչքդ աստղերով լեցուցած
Եկուր ինձի նայելու,
Որ իմ հոգւոյս ալ լոյս տաս
Եւ ջերմութիւն յուսատու:

Գիշերն ինձի կ'ընծայէ
Նոր հորիզոն դիւքական,
Ուր սէրն Աստուած լոկ կ'իշխէ
Երկրէս անդին անսահման:

Ո՛վ խորութիւնը կապոյտ
Խորհրդաւոր գիշերուան,
Խորհուրդ անհուն, լոյս եւ մութ
Ինձի, բոլոր մարդկութեան:

ԽԱՂԱՆԻՅ

Ալիքներէն ապըստամբ
Լաստին վըրայ ծեփծեփուն՝
Որպէս փրփուր, որպէս ամպ
Ես կը շարժիմ դողդոջուն:

Աշխարհը ծով մ'է հսկայ,
Անդունդներով ահաւոր,
Անոնց վերեւ ես հիմա
Կ'երթամ կու գամ սրգաւոր:

Մինչ հողի պէս կը շարժի
Գունտն աշխարհի ոտքիս տակ,
Սիրտն իմ, աւա՛ղ, կը հիւծի
Իր սպառումին անտեղեակ:

Կեանքին լարն է դիւրաբեկ,
Ո՞վ կարող է մահուան դէմ
Ճակատ հարքել, ցոյց տալ զէնք,
Ինքն է յաղթող՝ երբ յաղթեմ:

Գարնան կրկին կը ծաղկին
Կանաչ մարգեր ու յոյսեր,
Բայց կը մընայ սիրտըս հին
Իր ցաւերով ալեհեր:

Լաստին վըրայ դողդոջուն
Որպէս ալեակ մ'անդորրիկ
Ես քոյլ, անգոր ձեռքերուն
Կ'ըլլամ քշուառ խաղալիկ:

ՓՈՔՐԻՆ ԾԱՓՈՐ

Ափ մը փռի գրկեցի
Ու ցնդեցաւ երազն հիր.
Երկու աչքեր դըրացի
Վիշտըս լացին դառնալիր:

Հորիզոնէն հեռաւոր
Անոնք ինծի կը նային
Խաւարին մէջ լուսաւոր
Եւ արցունքներ կը կաթին:

Ամէն գիշեր աստղերէն
Սրտիս վըրայ կը հեղուն
Սէր ու գորով հըրեղէն
Եւ նոր կեանքի քարմուրիւն:

Սիրտըս սափոր մ'է փոքրիկ
Եւ գանձապահ երկնքին,
Ես կը սպասեմ անդորրիկ
Ալիքներու հեղեղին:

Մարդկային ոչ մէկ գորով
Ա՛հ, չգար երբեք աղարտել
Սիրտըս հարուստ անհունով.
Ոչ ոք գար ինձ այցելել

բացի այդ զոյգ աչքերէն:

ՈՒՂԻՆԵՐ

Կեանքին առջեւ կան ուղիներ անսահման
Սալարկըւած երազով.
Որոնց վըրայ մարդիկ անհոգ կ'ընթանան
Անձանօքին ծարաւով:

Կեանքին համար ի՛նչ ուստայներ կը հիւսէ
Դաւանան սիրտն ամէն օր.
Ամէն վայրկեան նոր հիւսքերով սնդուսէ
Զայն կը բանտէ նենգաւոր:

Այդ ուստային մէջ դիւրական ու անգէն
Ո՞վ բանտըւած չէ երբեք,
Ուր սարդն արիւն կը խլմէ մեր երակէն՝
Հեգնելով ցաւն ու եղբրդ:

Ուղիներ կան, որոնց յատակն է պղտոր
Եւ ուղիներ լոյս գիծերով ու պայծառ.
Մարդիկ կ'երթան շեղելով կամ անխոտոր,
Բայց ամէնուն ալ նոյն վախճանն հաւասար:

Հ. ՄԵՍՐՈՊ ԶԱՆԱՇԵԱՆ